



ՀԱՅ
ԿՈՄՊՈԶԻՏՈՐԱԿԱՆ
ԱՐՎԵՍՏԻ ՓԱՌԱՏՈՆ

13 ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՓԱՌԱՏՈՆ

23-30
03.2022

ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
ՍԻՄՖՈՆԻԿ
ՆԿԱԳԱՆՈՒՄԲ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ





Սիրելի հայրենակիցներ,

Ջերմորեն ողջունում եմ Հայ կոմպոզիտորական արվեստի 13-րդ փառատոնի կազմակերպիչներին, մասնակիցներին, ողջ արվեստասեր հասարակությանը:

Համաշխարհայնացման այս դարաշրջանում մշակույթը յուրաքանչյուր ազգի ինքնադրսևորման, բարեկամական կապերի ամրապնդման և ազգը ճանաչելի դարձնելու լավագույն միջոցն է: Այս առաքելությունն ունի նաև Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնը, որի դերը շատ մեծ է Հայաստանում և արտերկրում հայ դասական և ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունների տարածման և հանրահռչակման գործում: Այն մշակութային միջոցառում լինելուց գատ՝ հավաքական ինքնության և ազգային ոգու վառ դրսևորում է:

Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնի ամենաձանրակշիռ ձեռքբերումը հայ հանրության ուղղորդումն է դեպի դասական երաժշտություն: Փառատոնի շարունակական բնույթը և անընդհատ նոր հորիզոններ բացող գործունեությունը հանգեցնում են նրան, որ հանրությունն ավելի ու ավելի է մերձենում դասական երաժշտությանը, իսկ փառատոնի լսարանը տարեցտարի աճում և երիտասարդանում է:

Մեծապես կարևորելով նման միջոցառումները՝ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել փառատոնի կազմակերպիչներին և բոլոր մասնակիցներին:

Կրկին ողջունում եմ բոլորիդ՝ Հայ կոմպոզիտորական արվեստի 13-րդ փառատոնին մաղթելով բարի երթ, ստեղծագործական ձեռքբերումներ ու նոր ներշնչանքներ:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար



Ժամանակի փորձությունն անցած և մնայուն արժեք դարձած դասական երաժշտարվեստը ազգային մշակութային ինքնության կարևոր կրիչներից է, քանի որ այս կամ այն կերպ զգալիորեն արտացոլում է ազգային հատկանիշների շատ նրբերանգներ:

Հայ կոմպոզիտորական արվեստի փառատունը մեր նվագախմբի.համար, նախևառաջ, հայ դասական երաժշտության միջոցով ինքներս մեզ և աշխարհին ավելի ճանաչելի դառնալու հնարավորություն է: Փառատոնի առաքելությունների մեջ կարևոր տեղ են զբաղեցնում ինչպես հայ կոմպոզիտորների ժառանգության ներկայացումը, այնպես էլ պահպանումը գալիք սերունդների համար: Այսպես, իր պատմության ընթացքում փառատոնի բովանդակությունը հարստացվել է մոտ 80 հայ կոմպոզիտորի ավելի քան 200 ստեղծագործությամբ, թվայնացվել են մի քանի տասնյակ արժեքավոր պարտիտուրներ, որոնց մեջ մեծ թիվ են կազմել նաև մոռացության մատնված կամ կորսվելու վտանգի տակ հայտնված գործերը: Հայ և օտարերկրացի անվանի երաժիշտների մեկնաբանություններով մենք մշտապես ձգտել ենք կենդանի պահել անցյալում և մեր օրերում ստեղծվող դասական երաժշտության գրավչությունը ժամանակակից լսարանի համար:

Ուրախ եմ, որ Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնի մշակութային դերը տարեցտարի ավելի է արդարացնում է մեր ջանքերը: Շնորհակալ եմ փառատոնի բոլոր աջակիցներին, մասնակիցներին և երկրպագուներին՝ փառատոնի նպատակների հանդեպ հավատի և դրանք համատեղ ուժերով իրագործելու համար:

ՄԵՐԳԵՅ ՄՄԲԱՏՅԱԼ

Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնի գեղարվեստական ղեկավար,

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր



Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնը մեկնարկել է 2010 թվականին՝ Հայաստանի կոմպոզիտորների միության և Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի համատեղ ջանքերով: Ամենամյա փառատոնը ներկայացնում է հայ դասական և ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունների հայտնի և անհայտ էջերը, նպաստում հայ կոմպոզիտորական դպրոցի ավանդույթների պահպանմանն ու դրա արդի նվաճումների հանրահռչակմանը և իր ուրույն տեղը զբաղեցնում Հայաստանի երաժշտական կյանքում:

Փառատոնն այս տարի ևս ներկայանում է հետաքրքիր ծրագրով, պրեմիերաներով, ինչպես նաև հայ երաժշտության երախտավորների՝ Էդուարդ Բաղդասարյանի և Օհան Դուրյանի ծննդյան 100-ամյա հոբելյաններին նվիրված համերգով:

Ողջունում եմ Հայաստանի կոմպոզիտորների միության Երիտասարդական ֆորումի և Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի միջև ձեռք բերված համագործակցությունը, որի արդյունքում երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործությունները ևս հնարավորություն ունեն հնչելու այս փառատոնի համերգների ընթացքում:

Կարծում եմ՝ փառատոնն այսուհետև Հայաստանի կոմպոզիտորների միության հետ համատեղ շարունակելու է գրել իր տարեգրության փայլուն էջերը և նոր ու նպաստավոր հորիզոններ բացելու հայ կոմպոզիտորների ստեղծագործական ձեռքբերումների պահպանման և հանրահռչակման գործում:

ԱՐԱՄ ՍԱԹՅԱՆ

Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ

ՓԱՌԱՏՈՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնը հայաստանյան մշակութային կյանքի նշանակալից իրադարձություններից է և 2010 թվականին հիմնադրվելուց ի վեր անշեղորեն հետևում է հայ դասական և արդի կոմպոզիտորական դպրոցի, ավանդույթների պահպանման և ճանաչման ընդլայնման իր առաքելությանը: Ամենամյա փառատոնը կայացել է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի ու գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի ջանքերով և մշտապես ունեցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությունը, իսկ 2022 թվականից սկսած՝ այն անցկացվում է նաև Հայաստանի կոմպոզիտորների միության հետ համատեղ:

Յուրաքանչյուր տարի փառատոնը նվիրվում էր հայ անվանի կոմպոզիտորներից մեկին և հայաստանյան ու արտասահմանյան ունկնդրին ներկայացնում նրանց ստեղծագործական ժառանգությունը (Ղազարոս Սարյան (2010թ.), Առնո Բաբաջանյան (2011թ.), Տիգրան Չուխաջյան (2012թ.), Ռոմանոս Մելիքյան (2013 թ.), Ավետ Տերտերյան (2014թ.), Էդգար Հովհաննիսյան (2015թ.), Էդվարդ Միրզոյան (2016թ.), Հարո Ստեփանյան (2017թ.), Գրիգոր Եղիազարյան (2018թ.), Ավետ Տերտերյան (2019թ.), Ալեքսանդր Հարությունյան (2020թ.):





Նարե Արղամանյան



Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբ

2021 թվականը հորեյվանաշատ տարի էր և նշանավորում էր Ալեքսանդր Սպենդիարյանի 150-ամյակը, Առնո Բաբաջանյանի, Աղամ Խուդոյանի, Էդվարդ Միրզոյանի 100-ամյակները, Ջոն Տեր-Թադևոսյանի 95-ամյակը, ինչպես նաև մեր ժամանակակիցներ Միխայիլ Կոկոժակի 75-ամյա և Երվանդ Երկանյանի 70-ամյա տարեդարձերը: Փառատոնի շրջանակում երաժշտասեր հանրությանը ներկայացվեցին կոմպոզիտորների՝ երկար տարիներ չհնչած մեծ թվով ստեղծագործություններ, որոնց պարտիտուրներն անհրաժեշտ էր թվայնացնել և վերաթողարկել, ինչպես նաև հնչեցին մերօրյա մի շարք մեծակտավ ստեղծագործություններ, որոնք հնչեցին առաջին անգամ:

Փառատոնի կարևորագույն բաղադրիչներից է հայ կոմպոզիտորների սիմֆոնիկ և կամերային ստեղծագործությունների ծայնագրումը, տեսագրումը, պարտիտուրների և նվագաբաժինների թվայնացումը և պահպանումը: Հայտնի է, որ հայ կոմպոզիտորների բազմաթիվ ստեղծագործությունների պարտիտուրներ դեռևս մնում են հեղինակների անձնական կամ այլ արխիվներում և հաճախ գտնվում են անմխիթար վիճակում, հասանելի չլինելով ստեղծագործությունների համերգային ներկայացման համար: Փառատոնի գոյության ընթացքում թվայնացվել են հայ կոմպոզիտորների 100-ից ավելի ստեղծագործություններ, ծայնագրվել են 250-ից ավելի երաժշտական երկեր, իրականացվել են 170-ից ավելի պրեմիերաներ՝ ներգրավելով Հայաստանում գործող երգչախմբերին, նվագախմբերին և կամերային համույթներին, ինչպես նաև բազմաթիվ անհատ կատարողների, այդ թվում՝ տաղանդավոր երիտասարդ երաժիշտների: 2021 թվականի ընթացքում նվագախումբը ծայնագրեց նաև Ալեքսանդր Սպենդիարյանի սիմֆոնիկ և կամերային ստեղծագործությունները, որոնք շուտով լայն տարածում կստանան միջազգային երաժշտական թվային հարթակներում:

Փառատոնը նաև հնարավորություն է ստեղծում մեծանուն կոմպոզիտորների երաժշտական ժառանգության կողքին ներկայացնելու նաև երիտասարդ և նորահայտ կոմպոզիտորների ստեղծագործություններ: Փառատոնի համերգային երեկոներին հանդես են գալիս մենակատարներ ինչպես Հայաստանից, այնպես էլ արտերկրից՝ հայ կոմպոզիտորների բազմաժանր ստեղծագործություններն ընդգրկելով իրենց երկացանկերում:

2022թ. անցկացվող 13-րդ հայ կոմպոզիտորական փառատոնը ներառում է 3 համերգային երեկո, որոնց ծրագրերում կհնչեն Առնո Բաբաջանյանի, Էդուարդ Բաղդասարյանի, Օհան Դուրյանի, Մարտին Վարդազարյանի, Նուբար Ասլանյանի, Վարդան Աճեմյանի, Մարտին Ուլիխանյանի սիմֆոնիկ ստեղծագործությունները, կոնցերտները: Փառատոնի ընթացքում առաջին անգամ կներկայացվեն նաև երիտասարդ կոմպոզիտորներ Էլեն Յուլյանի և Տիգրան Համբարյանի ստեղծագործությունները: Նվագախմբի նախաձեռնությամբ փառատոնի շրջանակում սիմֆոնիկ նվագախմբի կազմով առաջին անգամ կկատարվեն Մարտին Ուլիխանյանի «Հայկական սիմֆոնիկ պարեր» ստեղծագործությունը, ինչպես նաև երկար տարիների ընդմիջումից հետո կհնչի Մարտին Վարդազարյանի «Ահեղ մարտերի անմեղ զոհերին» սիմֆոնիան:



Հովհաննես Չեքիջյան



Ռուբեն Ասատրյան

2022 թվականին լրանում է Էդուարդ Բաղդասարյանի և Օհան Դուրյանի 100-ամյակները, որոնց նվիրված համերգին կկատարվեն կոմպոզիտորների մի շարք ստեղծագործություններ, որոնք նույնպես երկար տարիներ չեն հնչել:

Փառատոնի բոլոր համերգները ձայնագրվելու և տեսագրվելու են ժամանակակից բարձրակարգ սարքավորումների միջոցով և հետարտադրական ընթացքից հետո կստեղծարվեն նվագախմբի սոցիալական էջերում, ինչպես նաև հանրահայտ միջազգային թվային հարթակներում:



Հասմիկ Պապյան



Հայկ Կազազյան և Վահագն Պապյան



Սերգեյ Խաչատրյան

Փառատոնի շրջանակներում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ հանդես կգան դաշնակահարներ Արուս Աճեմյանը (Հայաստան), Ժան-Պոլ Գասպարյանը (Ֆրանսիա), Արմինե Գրիգորյանը (Հայաստան), ջութակահար Կարեն Շահգալոյանը (Հայաստան) և բարիտոն Գևորգ Գինոսյանը (Հայաստան):

13-րդ հայ կոմպոզիտորական փառատոնի համերգները կղեկավարեն դիրիժորներ Սերգեյ Սմբատյանը և Վահագն Պապյանը:



Լիլիթ Արտեմյան



Դենիս Շապովալով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը ստեղծվել է Սերգեյ Սմբատյանի կողմից, որը նվագախմբի գեղարվեստական ղեկավարն ու գլխավոր դիրիժորն է մինչ օրս: Իր գոյության սկզբից ի վեր՝ նվագախումբը մեկ հարկի տակ հավաքել է դասական երաժշտության նվիրյալների, որոնց մշտապես միավորել է Հայաստանում մշակութային իրազեկության ընդլայնման և դասական երաժշտության զորությամբ մարդկանց ներաշխարհի հոգևոր կատարելագործման առաքելությանը: Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբն հանդես է գալիս հարուստ ու բազմազան երկացանկով, ինչպես նաև տարբեր ժանրեր ու կատարողական ձևաչափեր ընդգրկող տարեկան ավելի քան 50 համերգով:

Նվագախումբը բազմաթիվ առիթներով համագործակցել է աշխարհահռչակ կոմպոզիտորներ Քչիշտոֆ Պենդերեցկու, Սիր Կառլ Ջենքինսի, Գիյա Կանչելիի, Տիգրան Մանսուրյանի, ինչպես նաև շատ մեծանուն մենակատարների հետ: Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը բազմամյա բարեկամական հարաբերություններ ունի համաշխարհային մեծության երաժիշտների հետ, որոնց թվում՝ Վալերի Գերգիևը, Վլադիմիր Սպիվակովը, Մաքսիմ Վենգերովը, Դենիս Մացուևը, Վադիմ Ռեպինը, Վահագն Պապյանը, Բորիս Բերեզովսկին, Զախար Բրոնը և ուրիշներ:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ հյուրընկալվել է շատ հեղինակավոր համերգասրահներում, որոնց թվում՝ Փարիզի «Օպերա Գարնիեում», Բեռլինի «Կոնցերտհաուզում», Հաագայի «Դոկտոր Անտոն Ֆիլիպսզալում», Մոսկվայի «Չայկովսկու համերգասրահում» և Կոնսերվատորիայի մեծ դահլիճում, Բրյուսելի «Գեղեցիկ արվեստների պալատում», Համբուրգի «Էլբֆիլհարմոնիում», Մադրիդի թագավորական թատրոնում, Դուբայի օպերայում և այլուր:





2020 թվականը առանձնահատուկ էջ դարձավ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի պատմության մեջ՝ հանրահայտ ջութակահար և նվագախմբի ռեզիդենտ արտիստ Մաքսիմ Վենգերովի հետ ունեցած Եվրոպական համերգային տուրի շնորհիվ, որի ընթացքում նրանք փայլուն ելույթներ են ունեցել Բեռլինի ֆիլիարմոնիայի, Վիեննայի «Մուզիքֆեդայնի», Լոնդոնի «Բարբիքան սենթրի», Պրահայի «Դվորժակի համերգասրահի», Զալցբուրգի «Փառատոնային մեծ համերգասրահի», Մյունխենի «Ֆիլարմոնի Գասթայգի», Շտուտգարդի «Լիդեհալլեի», Մոսկվայի «Զարյադյե համերգասրահի» բեմերում:


Հայաստանում և արտերկրում ունեցած համերգային լայնածավալ գործունեությունից զատ՝ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը նաև մեծապես ճանաչված և գնահատված է Հայաստանի երիտասարդների կրթության գործում իր աստիճանաբար ընդլայնվող դերի համար: 2018 թվականից սկսած՝ «ԴասԱ» կրթամշակութային ծրագրի շրջանակում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը Սերգեյ Սմբատյանի գլխավորությամբ դասական երաժշտության հանդեպ հետաքրքրություն և համակրանք է բռնկում Հայաստանի ավագ դպրոցների աշակերտների մեջ: Սա նպատակ ունի խթանել առավել ընդարձակ մի շարժում՝ ուղղված երիտասարդ սերնդի շրջանում դասական երաժշտության մասին վեհ պատկերացումների և երաժշտական բարձր ճաշակի ձևավորմանը:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի մի շարք ելույթներ հեռարձակվել են Medici.tv, Euronews, and Classic.fm մեդիահարթակներում: 2019թ. «Մեցցո» հեռուստաընկերության կողմից թողարկվել է վավերագրական ֆիլմ՝ նվիրված Սերգեյ Սմբատյանին և նվագախմբի պատմությանը:

ՓԱՌԱՏՈՆԻ ԾՐԱԳԻՐ

23-30 03.2022

13 ՀԱՅ ԿՈՍՊՈԶԻՏՈՐԱԿԱՆ
ԱՐՎԵՍՏԻ ՓԱՌԱՏՈՆ



23 19:00
03.2022
«ԱՐԱՄ ԽԱԳԱՏՐՅԱՆ» ՀԱՄԵՐՉԱՍՐԱՀ

«ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՄՖՈՆԻԿ ՊԱՐԵՐ»

Էլեն Յուլյան. «Գրեյս» բարիտոնի և սիմֆոնիկ նվագախմբի համար.
պրեմիերա

Վարդան Աճեմյան. Դաշնամուրի կոնցերտ թիվ 2

- I. Largo, Allegro con fuoco
- II. Lento di molto
- III. Allegro con brio

Մարտին Ուլիխանյան. «Հայկական սիմֆոնիկ պարեր».
պրեմիերա

- I. Պարի ծագումը
- II. Շորոր
- III. Յարխուշտա
- IV. Բերդ
- V. Լալիք
- VI. Քոչարի



26 19:00
03.2022

«ԱՐԱՍ ԽԱԶԱՏՐՅԱՆ» ՀԱՍԵՐՊԱՍՐԱՀ

«ՀԵՐՈՍԱԿԱՆ ԲԱԼԼԱԴԻ»

Տիգրան Համբարյան. Սիմֆոնիկ պոեմ ուե մինոր, երկ 14.
պրեմիերա

Մարտին Վարդազարյան. Սիմֆոնիա «Ահեղ մարտերի անմեղ զոհերին»

Առնո Բաբաջանյան. «Հերոսական բալլադ» դաշնամուրի և նվագախմբի համար

ԺԱՆ-ՊՈԼ ԳԱՍՊԱՐՅԱՆ | ՍԵՐԳԵՅ ՍՄԲԱՏՅԱՆ
(դաշնամուր) | (դիրիժոր)



30 19:00
03.2022

«ԱՐԱՄ ԽԱԳԱՏՐՅԱՆ» ՀԱՄԵՐՉԱՍՐԱՀ

100

ՕՇԱՆ ԴՈՒՐՅԱՆ
ԷԴՈՒԱՐԴ ԲԱԴՂԱՍԱՐՅԱՆ

Նուբար Ասլանյան. «Մուսալեռցիներ» սիմֆոնիկ նվագախմբի համար

Էդուարդ Բադդասարյան. Դաշնամուրի կոնցերտ. 1-ին մաս
Ռապսոդիա ջութակի և նվագախմբի համար
Նոկտյուրն ջութակի և նվագախմբի համար

Օհան Դուրյան. Հատվածներ «Կոմիտասական» սյուիտներից

ԱՐՄԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԳԱԼԴՅԱՆ | ՎԱՀԱԳՆ ՊԱՊՅԱՆ
(դաշնամուր) | (ջութակ) | (դիրիժոր)

ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐ

**13 ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԱԿԱՆ
ԱՐՎԵՍՏԻ ՓԱՌԱՏՈՆ**



ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԱԿԱՆ 13 ԱՐՎԵՍՏԻ ՓԱՌՏՈՆ

ԱՌՆՈ ԲԱԲԱԶԱՆՅԱՆ

Հայ մեծանուն կոմպոզիտոր և դաշնակահար, ԽՍՀՄ (1971թ.) և ՀՍՍՀ (1956թ.) ժողովրդական արտիստ Առնո Բաբաջանյանը ծնվել է Երևանում, 1921թ. հունվարի 22-ին: «Ինչ էլ գրեմ՝ ստացվում է հայեցի», -մի անգամ խոստովանել է հայ մեծ կոմպոզիտոր Առնո Բաբաջանյանը: Շուրջ կես դար շարունակվեց ստեղծագործող ու կատարող, երաժշտության մոլեռանդ սիրահար արվեստագետի գործունեությունը, որն իր առաջին իսկ քայլերով գրավեց երաժշտասեր հասարակայնության սիրտը:


Դեռևս 5 տարեկան Առնոյի տաղանդը նկատել է Արամ Խաչատրյանը՝ ուղղորդելով նրան դեպի երաժշտություն: 1929թ. Առնո Բաբաջանյանն ընդունվել է Երևանի պետական կոնսերվատորիային կից երաժշտական դպրոց, որն ավարտելուց հետո սովորել է կոնսերվատորիայում: 1948 թվականից ուսումը շարունակել է Մոսկվայի կոնսերվատորիայում՝ դաշնամուրի մասնագիտությամբ՝ միաժամանակ արվեստում կատարելագործելով Մոսկվայում գործող Հայաստանի կուլտուրայի տանը կից ստուդիայում:

Առնո Բաբաջանյանի ստեղծագործական բազմաժանր ժառանգությունը ներառում է կոնցերտներ, կամերային-գործիքային ստեղծագործություններ, բազմաթիվ երգեր, երաժշտություն կինոֆիլմերի համար: Նա ստեղծագործել է տարբեր ոճերում՝ դասական, պոպ, ջազ:

Բաբաջանյանի ստեղծագործական ձեռագիրը ձևավորվել է Արամ Խաչատրյանի և Սերգեյ Ռախմանինովի ազդեցությամբ, իսկ նրա հեղինակային անհատականությունը դրսևորվել է դաշնամուրի և նվագախմբի համար «Հերոսական բալլադում» և դաշնամուրային տրիոյում (1952թ): Լայն ճանաչում է վայելում նաև 1950թ. գրված «Հայկական ռապսոդիան»:

«Առաջին սիրո երգը», «Երջանկության մեխանիկա», «Հարսնացուն հյուսիսից» և շատ այլ խորհրդային սիրելի ֆիլմերում հնչում են Բաբաջանյանի հեղինակած երգերը: Կոմպոզիտորը գրել է բազմաթիվ ստեղծագործություններ դաշնամուրի համար. «Էլեգիա», «Նոկտյուրն», «Անուրջներ» և շատ այլ անզուգական մեղեդիներ: Նրա հեղինակած երգերն աչքի են ընկնում քնարականությամբ և մեծ ձայնաձավալի ընդգրկմամբ: Առնո Բաբաջանյանի սիրված երգերը կատարել են ԽՍՀՄ ամենաանվանի երգիչները:

Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնի շրջանակում կհնչի կոմպոզիտորի «Հերոսական բալլադը»:



ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԱԿԱՆ 13 ԱՐՎԵՏՍԻ ՓԱՌԱՏՈՆ

ԷԴՈՒԱՐԴ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ


2022 թվականին լրանում է տաղանդավոր կոմպոզիտոր, դաշնակահար, մանկավարժ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Էդուարդ Իվանի Բաղդասարյանի (1922-1987) ծննդյան 100-ամյա հոբելյանը:

Էդուարդ Բաղդասարյանը 1947-ին գերազանցությամբ ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դաշնամուրի (պրոֆ. Գ.Սարաջևի դասարան), իսկ 1950-ին՝ կոմպոզիցիայի (պրոֆեսոր Գ.Եղիազարյանի դասարան) բաժինները: Ի դեպ, դաշնամուրի բաժնի պետական ավարտական քննությանը Հայաստանում առաջին անգամ կատարել է Դ.Շոստակովիչի դաշնամուրի և նվագախմբի համար գրված թիվ 1 Կոնցերտը և իր հողինակած պրելյուդները, որոնք արժանացել են քննական հանձնաժողովի բարձր գնահատականին: 1951-ին մեկնել է Մոսկվա և երաժշտական գիտելիքները կատարելագործել Հայ մշակույթի տան երաժշտական ստուդիայում՝ Գ.Ի.Լիտինսկու և Ն.Ի.Պեյկոյի ղեկավարությամբ: 1953թ. Մոսկվայում ուսումն ավարտելուց հետո՝ վերադարձել է Հայաստան և ձեռնամուխ եղել հայ երաժշտության համալիր ուսումնասիրությանը, մեկնել է Հայաստանի տարբեր շրջաններ և հավաքագրել բազմաթիվ ժողովրդական երգեր, ծավալել ակտիվ ստեղծագործական, կատարողական և մանկավարժական գործունեություն:

Կոմպոզիտորի բազմաժանր (երաժշտաթատերական, սիմֆոնիկ, կամերային և այլն) ստեղծագործական գործունեության մեջ գերակշռում են կամերային երաժշտության երկերը: Է.Բաղդասարյանը հեղինակ է նաև մի շարք թատերական ներկայացումների (Վ.Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետ», Գ.Սունդուկյանի «Պեպո», Հ.Թումանյանի «Ոսկի քաղաք» և այլն) և կինոյի («Տժվժիկ», «Եռանկյունի», «Ջրհորի մոտ», «Ձորի Միրոն» և այլն) համար գրված երաժշտության, բազմաթիվ էստրադային երգերի և նվագախմբային ստեղծագործությունների: Համամիութենական մրցույթում «Ոսկի քաղաքը» (ըստ Հ.Թումանյանի) թատերական ներկայացման համար գրված նրա երաժշտությունն արժանացել է առաջին մրցանակի:

Է.Բաղդասարյանի ստեղծագործությունները պարբերաբար հնչել են Ռուսաստանում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Իտալիայում, Գերմանիայում, Բուլղարիայում, Լեհաստանում, Բելրուսիայում, Սիրիայում, Արգենտինայում և այլուր: Իսկ դաշնամուրի համար գրված պրելյուդները 1963թ. հրատարակվել են նաև Լայպցիգում: Դաշնամուրի համար գրված կոնցերտը կոմպոզիտորի վերջին մեծակտավ ստեղծագործությունն է, որը նա գրել է 1970 թվականին և նվիրել անվանի դաշնակահարուհի Սվետլանա Նավասարդյանին, ում կողմից էլ այն առաջին անգամ կատարվել է Հայաստանի կոմպոզիտորների միության 1979թ. համագումարի սիմֆոնիկ համերգի ընթացքում:

Հայ կոմպոզիտորական փառատոնի շրջանակում կինչեն կոմպոզիտորի Ռապսոդիան և Նոկտյուրնը ջութակի և նվագախմբի համար, ինչպես նաև տասնամյակներ շարունակ չհնչած դաշնամուրի կոնցերտի առաջին մասը:



ՀԱՅ ԿՈՍՊՈԳՐԱՏՈՐԱԿԱՆ 13 ԱՐՎԵՏՏԻ ՓՈՈՍԱՆՈՆ

ՕՇԱՆ ԴՈՒՐՅԱՆ

2022թ. լրանում է տաղանդաշատ դիրիժոր, կոմպոզիտոր, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Օհան Խաչատուրի Դուրյանի (1922-2011) ծննդյան 100-ամյա հոբելյանը:

Օհան Դուրյանը ծնվել է 1922թ. սեպտեմբերի 8-ին Երուսաղեմում: 1945թ. ավարտել է Երուսաղեմի կոնսերվատորիայի դիրիժորական (ղեկավաներ՝ Վալտեր Պֆեֆեր և Ջորջ Սինգրը) և կոմպոզիտորական (ղեկ.՝ Յոզեֆ Գրինտալ) բաժինները, այնուհետև վարպետությունը մշակել Յյուրիխում և Փարիզում:

Օհան Դուրյանը ղեկավարել է աշխարհի ավելի քան 100 փայլուն նվագախմբերի, այդ թվում՝ Վիեննայի և Բեռլինի ֆիլհարմոնիկ նվագախմբերը: Նա եղել է Ավինյոյի օպերային թատրոնի գլխավոր դիրիժորը, Լայպցիգի օպերային թատրոնի երաժշտական ղեկավարը և «Գևանդհաուզ» սիմֆոնիկ նվագախմբի հրավիրյալ դիրիժորը: Հիմնադրել է Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության սիմֆոնիկ նվագախումբը, ղեկավարել Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը, ինչպես նաև Երևանի Օպերայի և բալետի թատրոնի սիմֆոնիկ նվագախումբը և Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբը՝ որպես գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր:

Օհան Դուրյանն այն եզակի դիրիժորներից էր, որն առանց պարտիտուրի ղեկավարում էր սիմֆոնիկ համերգներ և օպերաներ: Համերգային շրջագայություններով պարբերաբար ելույթ է ունեցել Ռուսաստանում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Գերմանիայում, Ավստրիայում, Շվեյցարիայում, Հուգոնիայում, Ռումինիայում, Բուլղարիայում և այլուր: Իսկ Լեհաստանում նրան անվանել են Արևելյան Եվրոպայի Տոսկանինի: Դիրիժորի ստեղծագործական հավատամքն էր հարազատ մնալ հեղինակային գաղափարներին և գործիքավորումներին, ծուլվել կոմպոզիտորի մտահղացմանը, ապա միայն դրանք մատուցել սեփական մեկնաբանությամբ:

Օհան Դուրյանը ստեղծագործել է դեռևս Երուսաղեմում ուսանելու տարիներին: Նրա երգերից մեկը՝ գրված Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի խոսքերով, Հայաստանում առաջին անգամ հնչել է Լուսինե Ջաքարյանի կատարմամբ: Նրա ստեղծագործական ժառանգության մի մասն է կազմում «Ունիվերսալիզմ» երաժշտական նոր սիստեմի հայտագործումը, որը 20-25 տարիների ուսումնասիրության արդյունք էր: Դուրյանի ստեղծագործություններն առանձնանում են մեղեդայնությամբ և հոգեբանական խորությամբ, որոնք արտահայտում են հեղինակի ապրումները և երաժշտական պատկերավոր ու խոհականությունը:

Օհան Դուրյանն արժանացել է մի շարք պատվավոր կոչումների. 1997-ին նրան շնորհվել է «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշան, 1996-ին՝ «Մովսես Խորենացի» մեդալ, իսկ 1998-ին՝ Ֆրանսիայի «Գրականության և արվեստի ասպետ» շքանշան:

Փառատոնի շրջանակում կհնչեն հատվածներ Օհան Դուրյանի «Կոմիտասական» սյուիտներից, որոնք երկար տարիներ չէն հնչել:



ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՐԱԿԱՆ 13 ԱՐՎԵՍՏԻ ՓԱՌԱՏՈՆ

ՎԱՐԴԱՆ ԱԾԵՄՅԱՆ

Վարդան Աճեմյանը ծնվել է 1956թ. արվեստի գործիչների մի քանի սերնդի անվանի ընտանիքում: 1973 թվականից ուսանել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում՝ Ղազարոս Սարյանի ստեղծագործական դասաբանում, որի ղեկավարությամբ էլ այնուհետև ավարտել է ասպիրանտուրան 1981թ.: Ուսանողական տարիներին գրված լավագույն ստեղծագործություններից են «Սիմֆոնիկ պոեմը», «Ժողովրդական երգերի շարանը», Պոլիֆոնիկ սոնատը:

Ուսման տարիների գեղարվեստական աճի լուրջ ապացույցը «Կիկոսի մահը» օպերան էր, որը արժանացավ ամենաբարձր գնահատականի: «Կիկոսի մահից» հետո երիտասարդ կոմպոզիտորին միանգամից երեք ուղեգրի հնարավորություն ընձեռվեց. առաջինն օպերային բեմադրությունն էր, երկրորդը՝ ասպիրանտուրայում ուսումը շարունակելը, երրորդը՝ կոմպոզիտորների միության անդամությունը:

Իր թիվ 1 սիմֆոնիայի համար 1987 թվականին կոմպոզիտորն արժանացել է Հայաստանի ազգային մրցանակի:

Վարդան Աճեմյանը գրել է նվագախմբային, կամերային, վոկալ և գործիքային, ինչպես նաև դաշնամուրային երաժշտություն: 2007թ. նրա 6 կարևորագույն ստեղծագործությունները հավատարմագրվել են Շվեյցարիայի «BIM Edtition» հրատարակչության կողմից: Վերջերս սաքսոֆոնի և նվագախմբի համար գրված «Արկած» ստեղծագործությունը հավաստագրվել է Ֆրանսիայի «CDMS» ընկերության կողմից: 2008 թվականից «SUISA» ընկերության անդամ է:

1987 թվականից Վարդան Աճեմյանը աշխատում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, որտեղ դասավանդել է գործիքավորում և գործիքագիտություն, իսկ 1995 թվականից՝ նաև կոմպոզիցիա: Նա իր ճանաչելի տեղն է զբաղեցնում իր սերնդի ամենաշնորհալի կոմպոզիտորների շարքում, իսկ նրա ստեղծագործությունները կատարվել են Հայաստանում, Բուլղարիայում, Չեխիայում, Ֆինլանդիայում, Վրաստանում, Իսլանդիայում, Լեհաստանում, Ռուսաստանում, Մեծ Բրիտանիայում, Շվեյցարիայում և ԱՄՆ-ում: 2010թ. մայիսին Վարդան Աճեմյանը արժանացել է Հայաստանի Հանրապետության արվեստի վաստակավոր գործչի կոչման: 2015թ. արժանացել է ՀՀ պետական մրցանակի՝ դաշնամուրի, զոսերի և լարային նվագախմբի համար գրված «Հնչյունի թատրոն» կոնցերտային պոեմի համար:

13-րդ հայ կոմպոզիտորական փառատոնի շրջանակում կկատարվի կոմպոզիտորի թիվ 2 դաշնամուրի կոնցերտը, որում վառ կերպով արտահայտված է ազգային և ժամանակակից երաժշտության միաձուլումը: Այս ստեղծագործությունը Վարդան Աճեմյանը նվիրել է իր դստերը՝ Արուս Աճեմյանին:



ՀԱՅ ԿՈՄՊՈՑԻՏՈՐԱԿԱՆ 13 ԱՐՎԵՍՏԻ ՓԱՌՍՈՆ

ՄԱՐՏԻՆ ՌԻԼԻԽԱՆՅԱՆ

Մարտին Ուլիխանյանն ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի փողային (Լ. Բրուտյանի դասարան) և կոմպոզիցիայի (Լ. Չաուչյանի դասարան) բաժինները: 2007թ. ավարտել է Երևանի պետական կոնսերվատորիայի ասպիրանտուրան՝ որպես կոմպոզիտոր (ղեկավար՝ պրոֆ. Լ. Չաուչյան): 1997թ. հիմնադրել է «Ուլիխանյան» կվինտետը և դարձել այդ խմբի գեղարվեստական ղեկավարը, կլարնետահարը, գործիքավորողը և կոմպոզիտորը: 2008թ. իր եղբոր՝ Վարդան Ուլիխանյանի հետ միասին հիմնադրել է «Ուլիխանյան» ակումբը, որտեղ, Հայաստանի մշակույթի նախարարության հետ համատեղ, կազմակերպել է էքսպերիմենտալ երաժշտության առաջին փառատոնը Հայաստանում:

Թողարկել է «Ճանապարհ դեպի տաճար» (2007թ.) և «Հովհաննես Թումանյան. մանկական ստեղծագործություններ» (2010թ.) ձայնասկավառակները: Վերջինս հեղինակը նվիրաբերել է շուրջ 3000 մանկական կազմակերպությունների Հայաստանի և Արցախի տարածքում՝ ՀՀ մշակույթի նախարարության և «Հայաստան» հիմնադրամի հետ համատեղ: 2013թ. վերապատրաստվել է Սան Ֆրանցիսկոյի կոնսերվատորիայի կոմպոզիցիայի բաժնում: 2015թ. ավարտել է Լոս Անջելեսի (UCLA) համալսարանի «ֆիլմի երաժշտություն» բաժինը: Արժանացել է մի շարք մրցանակների, այդ թվում՝ Ա. Խաչատրյանի անվան կոմպոզիտորների մրցույթում 3-րդ մրցանակի (2003թ.), «Նարեկացի» արվեստի միության մրցանակի (2006թ.), երգչախմբային ստեղծագործությունների մրցույթում՝ դափնեկրի կոչման (2006թ.), սաքսոֆոնային ստեղծագործությունների մրցույթում՝ առաջին մրցանակի (2007թ.), Համաշխարհային հայկական կոնգրեսի մրցանակի «7 մահացու մեղքեր» ստեղծագործության համար (2011թ.), 2013թ. UNICA միջազգային կինոփառատոնում՝ պատվավոր դիպլոմի՝ «Դուռ» ֆիլմի և երաժշտության համար, Ջերրի Գոլդսմիթի անվան «Լավագույն ուսանող կինոկոմպոզիտոր» մրցանակի (Լոս Անջելես 2015թ.):

Մարտին Ուլիխանյանի ստեղծագործությունները հնչել են ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Լեհաստանում, Ռումինիայում, Ռուսաստանում, Լիբանանում, Ղազախստանում, Սիրիայում, Հորդանանում, Լատվիայում և Լիտվայում:

Կոմպոզիտորը ստեղծագործում է աշխատում է ամենատարբեր երաժշտական ժանրերում և ոճերում: Ակտիվորեն համագործակցում է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ: «Հայկական սիմֆոնիկ պարեր» ստեղծագործությունը, որն առաջին անգամ կհնչի Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնի շրջանակում, կոմպոզիտորը նվիրել է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբին:



ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԱԿԱՆ 13 ԱՐՎԵՍՏԻ ՓԱՌԱՏՈՆ

ՄԱՐՏԻՆ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

Կոմպոզիտոր, դաշնակահար, երաժշտական-հասարակական գործիչ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ժողովրդական արտիստ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Մարտին Վարդազարյանը հայ արդի կոմպոզիտորական արվեստի հանրահայտ ներկայացուցիչներից է:

Ծնվել է 1938թ. ապրիլի 4-ին Երևանում: Կոմպոզիտորի ստեղծագործական ունակություններն ի հայտ են եկել դեռևս Երևանի Պ.Ի.Չայկովսկու անվան միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոցում ուսանելու տարիներին: 1961 թվականին նա ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դաշնամուրային (պրոֆ. Գ.Սարաջյանի դասարան), իսկ 1970-ին՝ կոմպոզիցիայի բաժինները՝ պրոֆեսոր Էդվարդ Միրզոյանի ղեկավարությամբ:

Մ. Վարդազարյանը հիմնադրել և ղեկավարել է Հայաստանի հեռուստատեսության և ռադիոյի էստրադային նվագախումբը (1966-1972), որի խորհրդականն ու դիրիժորն է 1990-ից առ այսօր:

Մարտին Վարդազարյանը ծավալել է ակտիվ ստեղծագործական գործունեություն, որը ներառում է սիմֆոնիկ, կամերային և խմբերգային երաժշտության ժանրերը: Նա հեղինակ է բազմաթիվ էստրադային և ջազային երգերի, էստրադային նվագախմբի համար գրած ստեղծագործությունների, շուրջ 150 թատերական ներկայացումների (Ու.Շեքսպիր՝ «Մակբեթ», «Լիր արքա», Հ.Թումանյան՝ «Քաջ Նազար», Հ.Պարոնյան՝ «Մեծապատիվ Մուրացկաններ», ևն) և 50-ից ավելի ֆիլմերի («Բարև, ես եմ», «Սարոյան եղբայրներ», «Երկունք», «Վերջին նետում», «Մենավոր ընկուզենին», ևն) երաժշտության, որոնք արժանացել են լայն ճանաչում են գտել հանրության շրջանում: Նրա ստեղծագործությունները հնչել են ինչպես Հայաստանում, այնպես էլ Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Բելգիայում և շատ այլ երկրներում:

1970 թվականից Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ է, իսկ 1974-1989թթ. գործել է որպես գեղարվեստական ղեկավար: 2013 թվականից առ այսօր վարչության անդամ է:

Մարտին Վարդազարյանին շնորհվել է ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ կոչում (1989թ.), ՀՀ ժողովրդական արտիստի պատվավոր կոչում (2011թ.): Նա պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի շքանշանով (2017թ.), ՀՀ վարչապետի հուշամեդալով (2017թ.), ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալով (2008թ.), արժանացել է «Երևանի պատվավոր քաղաքացի» պատվավոր կոչման (2007թ.), իսկ 2018-ին՝ Արցախի Հանրապետության «Վաչագան Բարեպաշտ» մեդալի:

Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնի շրջանակում կինչի կոմպոզիտորի 1987թ. գրված «Ահեղ մարտերի անմեղ զոհերին» սիմֆոնիան:



13 ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԱԿԱՆ ԱՐՎԵՏՏԻ ՓՈՈՍՏՈՆ

ՆՈՒԲԱՐ ԱՍԼԱՆՅԱՆ

Նուբար Ասլանյանը ծնվել է 1943 թվականին Աթենքում: 1946 թվականին հայրենադարձել է Խորհրդային Հայաստան: 1973թ. ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի կոմպոզիցիայի բաժինը (Գրիգոր Եղիազարյանի մասնագիտական դասարան): 1994 թվականից հաստատվել է Իսրայելում:

Ասլանյանի ստեղծագործությունները հնչել են ԱՄՆ-ում, Կանադայում, Հարավսլավիայում, Հունաստանում, Բուլղարիայում, Շվեդիայում, Շվեյցարիայում, Հարավային Կորեայում, Գերմանիայում, նախկին ԽՍՀՄ հանրապետություններում, Իսրայելում, Հայաստանում, Լեհաստանում, Ռումինիայում և այլուր՝ բազմաթիվ հեղինակավոր արտիստների և կոլեկտիվների կատարմամբ: Խառը երգչախմբի համար գրված նրա «Բերքի տոն» կանտատը Հարավային Կորեայում 14 երկրների մասնակցությամբ անցկացված փառատոնում կատարվել է Լեհաստանի ռադիոյի երգչախմբի կողմից: 2004թ. Երևանի Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում Իսրայելի արտգործնախարարության և Հայաստանում Իսրայելի դեսպանության նախաձեռնությամբ տեղի է ունեցել Նուբար Ասլանյանի հեղինակային համերգը՝ նվիրված Իսրայելի անկախության 56-ամյակին:

Կոմպոզիտորը ստեղծագործել է բազմաթիվ երաժշտական ժանրերում, հեղինակ է սիմֆոնիկ, փողային, կամերային, խմբերգային, վոկալ սիմֆոնիկ, գործիքային, մանկական ստեղծագործությունների: Հայտնի են և բազմիցս կատարվել են կոմպոզիտորի լարային կվարտետներն ու տարբեր գործիքների համար գրված սոնատները, փողային նվագախմբի համար գրված ստեղծագործությունները, մասնավորապես՝ «Սարդարապատ», «Զինվորի երազանքը» քայլերգերը: Վերջիններս կատարվել են Մոսկվայի Ժուկովսկու, Լենինի, Ֆրունզեի անվան ակադեմիաների փողային նվագախմբերի կատարմամբ, ինչպես նաև Խարկովի Բարձրագույն տանկային ուսումնարանի և Ավիացիոն միացյալ փողային նվագախմբի կատարմամբ: Նուբար Ասլանյանը հեղինակել է «Սիփանա քաջեր» կոնցերտ-պոեմը, «Հիմն Արցախի» վոկալ սիմֆոնիկ պոեմը, Ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված շեփորի կոնցերտը, կոնցերտներ գրված կլարնետի, ֆլեյտայի ինչպես նաև երկու կոնցերտ տրոմբոնի և նվագախմբի համար:

Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնի շրջանակում կինչի կոմպոզիտորի «Մուսալեռցիներ» ստեղծագործությունը, որը մուսալեռցիների ֆոլկլորային երաժշտություն է՝ կոմպոզիտորի կողմից մշակված սիմֆոնիկ նվագախմբի համար: Հեղինակն այն նվիրել է իր առաջին ուսուցիչ Գրիգոր Հախինյանին:



13 ՀԱՅ ԿՈՄՊՈԳԻՏՈՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՓԱՌՏՈՆ

ՏԻԳՐԱՆ ՀԱՄԲԱՐՅԱՆ

Երիտասարդ կոմպոզիտոր Տիգրան Համբարյանը ծնվել է 1986 թվականի մայիսի 2-ին Երևանում: Նա ստեղծագործում է 12 տարեկանից: 2008թ. ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դաշնամուրային (պրոֆ. Ս.Բարսեղյանի դասարան) և կոմպոզիցիայի (պրոֆ. Լ.Չաուշյանի դասարան) բաժինները:

2015 թվականից Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ է: Հեղինակ է բազմաթիվ կամերային ստեղծագործությունների, որոնք գրված են ավանդական տոնայնական գրելաճով և գրեթե չեն պարունակում ավանգարդ երաժշտության հատկանիշներ:

Փառատոնի շրջանակում առաջին անգամ կինչի Տիգրան Համբարյանի «Սիմֆոնիկ պոեմը»: Այն երիտասարդ կոմպոզիտորի դեռևս միակ ստեղծագործությունն է սիմֆոնիկ երաժշտության ժանրում, որը գրվել է 2011 թվականին, ապա խմբագրվել՝ 2017-ին: Ստեղծագործության մեջ արձարծված է մարդ-բնություն, մարդ-տիեզերք հարաբերությունների թեման, ինչպես նաև հոգեբանական խորությամբ ընթացող մարդկային տարբեր հոգեվիճակների փոխակերպումների շղթայական հաջողականությունը:



ՀԱՅ ԿՈՄՊՈԳԻՏՈՐԱԿԱՆ ԱՐՎԵՏՏԻ ՓԱՌՏՈՆ

13

ԷԼԵՆ ՅՈԼՉՅԱՆ

Երիտասարդ կոմպոզիտոր Էլեն Յոլչյանը ծնվել է 1992 թվականի հոկտեմբերի 17-ին Երևանում: 2011-2013 թվականներին սովորել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտագիտական բաժնում (ղեկավար՝ պրոֆ. Ա.Սարյան), ապա տեղափոխվել ստեղծագործական բաժին (պրոֆ. Վ.Աճեմյանի մասնագիտական դասարան), որն ավարտել է 2015թ.: 2015-2017թթ. ուսումը շարունակել է նույն բաժնի մագիստրատուրայում՝ Վարդան Աճեմյանի ղեկավարությամբ:

Էլեն Յոլչյանը 2018 թվականից Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ է: Նա հեղինակ է մի շարք սիմֆոնիկ ու կամերային ստեղծագործությունների և երաժշտագիտական հոդվածների:

Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնի շրջանակում առաջին անգամ կինչի կոմպոզիտորի «Գրեյս» (թարգմանաբար՝ «Շնորհ») ստեղծագործությունը սիմֆոնիկ նվագախմբի և բարիտոնի համար՝ գրված 2017 թվականին: Ստեղծագործության առանցքում Աստվածամոր յուրօրինակ փառաբանությունն է և դրա կառուցվածքում անկյունաքարային նշանակություն ունի Գրիգոր Նարեկացու «Մատյան Ողբերգության» Բան 2-ից կիրառված հատվածը:

ՄԵՆԱԿԱՏԱՐՆԵՐ

13 ՀԱՅ ԿՈՍՊՈԶԻՏՈՐԱԿԱՆ
ԱՐՎԵՍՏԻ ՓԱՌԱՏՈՆ



ՀԱՅ ԿՈՍՊՈԳՐԱՏՈՐԱԿԱՆ 13 ԱՐՎԵՍՏԻ ՓԱՌԱՏՈՆ

ԱՐՈՒՍ ԱՃԵՄՅԱՆ

Դաշնամուր

Արուս Աճեմյանն ավարտել է Չայկովսկու անվան միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոցը, այնուհետ՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան և նույն բուհի ասպիրանտուրան՝ պրոֆ. Ռ.Թանդիլյանի ղեկավարությամբ:

Դաշնակահարուհին արժանացել է բազմաթիվ հանրապետական մրցույթների մրցանակների, այդ թվում՝ 2000թ. Բաբաջանյանի անվան մրցույթի 1-ին և հատուկ մրցանակների, ինչպես նաև եղել է Վ.Սպիվակովի միջազգային բարեգործական հիմնադրամի, Օրբելյանի անվան հիմնադրամի, Մշակութային փոխանակման միջազգային հիմնադրամի (International Cultural Exchange Fund) կրթաթոշակառու՝ 2002թ. վերջինիս կողմից նաև արժանանալով 1-ին մրցանակի:

2001թ. հանդես է եկել «Մոսկվայի վիրտուոզներ» անսամբլի հետ՝ Վ.Սպիվակովի ղեկավարությամբ: 2001թ. մասնակցել է Կոլմարի և Օքսֆորդի միջազգային 3-րդ փառատոններին, 2004 թվականին՝ Իտալիայի «Մոդենայի գիշերներ» փառատոնին, ինչպես նաև մասնակցել է փառատոնների Գերմանիայում և Լեհաստանում: Արուս Աճեմյանը ելույթ է ունեցել Murfreesboro Philharmonic նվագախմբի հետ՝ դոկտոր Լ.Հարվինի ղեկավարությամբ, նաև մասնակցել է Դ.Պոլակի, Ն.Պետրովի, Գ.Չերնի-Ստեֆանսկայայի, Մ.Վոսկրեսենսկու, Ն.Յուժանինի, Օ.Յաբլոնսկայայի, Մ.Պրոսպերի և Ն.Սվետլանովայի վարպետության դասընթացներին:

2003թ. Մոսկվայի կամերային նվագախմբի հետ (գեղարվեստական ղեկավար՝ Կ.Օրբելյան) 6 համերգով ելույթներ է ունեցել Բրազիլիայում և Ուրուգվայում: 2008թ. AMC ընկերությունը թողարկել է դաշնակահարուհու ստեղծագործություններով «Romantic Fire» ձայնասկավառակը: 2009թ. Արուս Աճեմյանն արժանացել է ՀՀ նախագահի մրցանակի, իսկ 2014թ.՝ ՀՀ վաստակավոր արտիստի կոչման:



ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԱԿԱՆ 13 ԱՐՎԵՍՏԻ ՓԱՌԱՏՈՆ

ԱՐՄԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Դաշնամուր

Արմինե Գրիգորյանը ծնվել է Երևանում, ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան (պրոֆեսորներ Գեորգի և Սերգեյ Սարաջյանների դասարան):

«Հռոմ 2003» (“Roma 2003”) դաշնակահարների միջազգային մրցույթում արժանացել է կրկնակի դափնեկրի կոչման և Հռոմի պատգամավորների պալատի ջքանշանի: Նա նաև Լեհաստանի մշակույթի վաստակավոր գործիչ է:

2004 թվականից Արմինե Գրիգորյանը հանդիսանում է Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի տնօրենը և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, իսկ 2005 թվականից Խաչատրյանի անվան եռյակի դաշնակահարն է:

Խաչատրյանի անվան եռյակի կազմում և որպես մենակատար՝ Արմինե Գրիգորյանը համերգային շրջագայություններով հանդես է եկել Հյուսիսային, Կենտրոնական և Հարավային Ամերիկայի երկրներում, Շվեյցարիայում, Մեծ Բրիտանիայում, Կանադայում, Գերմանիայում, Ավստրիայում, Իսպանիայում, Ճապոնիայում, Չինաստանում, Լիբանանում, Բուլղարիայում, Մալթայում, Չեխիայում, Իտալիայում, Լեհաստանում, Ավստրալիայում, Ռուսաստանում, Վրաստանում, Մոլդովայում, ԱՊՀ և Մերձբալթյան այլ երկրներում:

Նա ելույթներ է ունեցել համաշխարհային բազմաթիվ հեղինակավոր համերգասրահներում, որոնց թվում՝ Վիեննայի «Musikverein», Համբուրգի «Laeizhalle», Լայպցիգի «Gewandhaus», Մյունխենի «Gasteig» համերգասրահներում, Լոնդոնի «Եղիսաբեթ թագուհու անվան դահլիճում», Տոկիոյի «Սանտորի հոլ», Տորոնտոյի «Koerner Hall» համերգասրահներում և այլուր:

Դաշնակահարուհին թողարկել է մի քանի ձայնասկավառակ՝ այդ թվում «Արամ Խաչատրյան. անհայտ էջեր» սկավառակը՝ նվիրված մեծ կոմպոզիտորի քիչ հայտնի դաշնամուրային ստեղծագործություններին:



ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՓԱՌՍՈՆ

13

ԿԱՐԵՆ ՇԱՀԳԱԼՅԱՆ

Զուրակ

Կարեն Շահգալոյանը Պաբլո Սարասատեի անվան միջազգային մրցույթի դափնեկիր է, ավարտել է Մոսկվայի Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիան (պրոֆեսոր Վ. Տրետյակովի դասարան):

2003թ. ավարտել է նաև կոնսերվատորիայի ջութակի բաժնի ասպիրանտուրան՝ պրոֆեսոր Մ. Գլեզարովայի ղեկավարությամբ: Մասնակցել է Յ.Մենուիինի, Վ.Սպիվակովի, Գ.Ժիլինի, Եվ.Չուգանայի վարպետության դասերին: 1998-2002 թթ. հանդես է եկել Վլադիմիր Սպիվակովի ղեկավարած «Մոսկվայի վիրտուոզներ» անվանի նվագախմբի կազմում:

Շահգալոյանը հանդես է եկել աշխարհի բազմաթիվ հեղինակավոր համերգասրահներում, ինչպիսիք են Նյու Յորքի «Քարնեգի հոլը», «Մոսկվայի մեծ համերգասրահը», Լոնդոնի «Ռոյալ ֆեստիվալ հոլը», Վիեննայի «Musikverein» համերգասրահը, Համբուրգի «Laezhalle» համերգասրահը, Լոնդոնի «Purcell Room» համերգասրահը, Տոկիոյի «Սանտորի հոլ» և «Օպերա սիթի հոլ» համերգասրահները և այլ: Նա հյուրախաղերով հանդես է եկել ԱՄՆ-ի, Չինաստանի, Շվեդիայի, Հարավային Կորեայի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Ճապոնիայի, Ավստրիայի, Ավստրալիայի, Շվեդիայի, Իսպանիայի, Իտալիայի, Լատվիայի, Լիտվայի, Չեխիայի, Վրաստանի, Մոլդովայի, Ռուսաստանի և Հայաստանի ավելի քան 200 քաղաքներում:

Շահգալոյանը Ռիգայում անցկացվող «Classic Strings» մրցույթ-փառատոնի գեղարվեստական ղեկավարն է:

2006 թվականից ներկայանում է Խաչատրյանի անվան եռյակի կազմում:



ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԱԿԱՆ 13 ԱՐՎԵՏՏԻ ՓԱՌԱՏՈՆ

ԺԱՆ-ՊՈԼ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Դաշնամուր

Ժան-Պոլ Գասպարյանը ծնվել է 1995թ. Փարիզում՝ երաժիշտների ընտանիքում, 14 տարեկանում ընդունվել է Փարիզի երաժշտության և պարերի բարձրագույն ազգային կոնսերվատորիա և 2015թ. ստացել մագիստրոսի ստիճան: Նրա ուսուցիչներն են եղել Օլիվյե Գարդոնը, Միշել Բերոֆֆը, Լորան Կաբասոն, Տատյանա Ջելիկմանը, Էլիսա Վիրսալաձեն:

Մոցարտի, Բեթհովենի, Շոպենի, Լիստի, Մենդելսոնի, Սեն-Սանսի, Չայկովսկու, Ռախմանինովի, Գերշվինի և այլ կոմպոզիտորների ստեղծագործությունների կատարմամբ Ժան-Պոլ Գասպարյանը որպես մենակատար հանդես է եկել մի շարք նվագախմբերի հետ, որոնց թվում՝ «Orchester National d'Île-de-France» նվագախումբը, Խեմնիցի Ռոբերտ Շումանի անվան ֆիլհարմոնիկ նվագախումբը, Հյուսիսային Գերմանիայի ֆիլհարմոնիկ նվագախումբը, Նորմանդական տարածաշրջանային նվագախումբը, Վալենսիայի սիմֆոնիկ նվագախումբը: Ժան-Պոլը ելույթ է ունեցել Ցյուրիխի «Tonhalle», Համբուրգի «Laeiszhalle», Բրեմենի «Die Glocke», Զալցբուրգի «Mozarteum», Բելգրադի «Kolarac» և այլ համերգասրահներում:

Ժան-Պոլը հաղթող է ճանաչվել 2014թ. Բրեմենի եվրոպական երաժշտական մրցույթում, 2015թ. Իսպանիայում և 2013թ. Անգլիայում անցկացված «José Iturbi» միջազգային մրցույթներում:



ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԱԿԱՆ 13 ԱՐՎԵՍՏԻ ՓԱՌԱՏՈՆ

ԳԵՎՈՐԳ ԳԻՆՈՍՅԱՆ

Բարիտոն

Գևորգ Գինոսյանը ծնվել է 1998 թվականի մայիսի 17-ին, Արմավիր մարզի Նալբանդյան գյուղում: 2020 թվականին ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ակադեմիական երգեցողության բաժինը (ղեկավար՝ պրոֆ. Մ.Հովակիմյան), իսկ 2020-ին՝ նույն բաժնի մագիստրատուրան (ղեկավար՝ պրոֆ. Մ.Հովակիմյան):

2021 թվականից որպես մենակատար հանդես է գալիս Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի երիտասարդական օպերային ծրագրի շրջանակներում կազմակերպվող համերգներում:

ԴԻՐԻՇՈՐՆԵՐ

**13 ՀԱՅ ԿՈՍՊՈՉԻՏՈՐԱԿԱՆ
ԱՐՎԵՍՏԻ ՓԱՌԱՏՈՆ**



13 ՀԱՅ ԿՈՍՊՈՑԻՏՈՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՓԱՌԱՏՈՆ

ՎԱՀԱԳՆ ՊԱՊՅԱՆ

Անվանի դաշնակահար և դիրիժոր Վահագն Պապյանը Վիանա դա Մոտայի անվան միջազգային մրցույթի դափնեկիր է (1979թ.): Նա դաշնամուր ուսանել է Մոսկվայի պետական (պրոֆ. Մ.Ա.Վոսկրոսենսկի), իսկ դիրիժորություն՝ Սանկտ Պետերբուրգի (պրոֆ. Ի.Ա.Մուսին) կոնսերվատորիաներում:

Դաշնակահարի կարիերան Պապյանը սկսել է 1980թ., իսկ 1984-ին տեղի է ունեցել նրա առաջին դիրիժորական ելույթը: Նույն տարում նա հրավիրվել է Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբ՝ որպես 2-րդ դիրիժոր, իսկ 1987-89թթ. գործել է որպես նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր: 1991թ. հանդես է եկել որպես Բեեր Շևայի սիմֆոնիկ նվագախմբի դիրիժոր, ինչպես նաև ղեկավարել է Երուսաղեմի սիմֆոնիկ նվագախումբը:

Երաժշտի ելույթների աշխարհագրությունն ընդգրկում է հինգ տասնյակից ավելի երկրներ: Նա հանդես է եկել մեծ թվով հեղինակավոր բեմերում, այդ թվում՝ Վիեննայի «Musikverein», Յյուրիխի «Tonhalle», Լոնդոնի «Բարբիքան» կենտրոնի համերգային դահլիճներում, Տոկիոյի «Սանտորի հոլ» համերգասրահներում, Մոսկվայի կոնսերվատորիայի մեծ դահլիճում և այլուր:

Վահագն Պապյանը ղեկավարել է Իսրայելի և Տոկիոյի ֆիլհարմոնիկ, Ռուսաստանի պետական, Սլովակիայի ռադիոյի և շատ այլ նվագախմբեր: 2008-2013թթ. հանդես է եկել որպես Ղազախստանի պետական նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր, 2006 թվականից առ այսօր Աշդոդի սիմֆոնիկ նվագախմբի ղեկավարն է: Համագործակցել է Վ.Գերգիևի, Ա.Կորսակովի, Օ.Կոզանի, Դ.Խվորոստովսկու, Մ.Պլետնյովի, Վ.Տրետյակովի և շատ այլ անվանի երաժիշտների հետ: Մշտապես անսամբլային կազմում հանդես է գալիս ջութակահար Մ.Վենգերովի հետ:

Տարիներ շարունակ Վահագն Պապյանը դասավանդում է Թել Ավիվի համալսարանի Բուհման-Մեթայի անվան Բարձրագույն դպրոցում:



ՀԱՅ ԿՈՄՊՈՑԻՏՈՐԱԿԱՆ 13 ԱՐՎԵՏՏԻ ՓԱՌԱՏՈՆ

ՍԵՐԳԵՅ ՍԱԲԱՏՅԱՆ

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հիմնադիր, գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանը մեծ ճանաչում է վայելում ինչպես Հայաստանում, այնպես էլ միջազգային ասպարեզում: 2019 թվականի սեպտեմբերից նա դարձավ նաև Մալթայի ֆիլհարմոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժորը, որին նախորդել էին նվագախմբի հետ համատեղ համերգային շրջագայությունները Գերմանիայում, Ավստրիայում և Միացյալ Նահանգներում, մեծ հաջողությամբ հանդես գալով Բեռլինի ֆիլհարմոնիայի, Վիեննայի «Մուզիքֆեդայն» և Նյու Յորքի «Քարնեգի հոլ» համերգասրահներում:

Հիմքից սիմֆոնիկ նվագախումբ ստեղծելու իր փորձով զինված՝ Սերգեյ Սմբատյանը վերջին տարիներին ստեղծել է չորս այլ նվագախմբեր ևս: 2015 թվականին նա ստեղծեց «24/04» նվագախումբը՝ ի հիշատակ Հայոց ցեղասպանության 100-ամյակի, իսկ այնուհետև՝ «Անկախության սերունդ» համահայկական նվագախումբն ու երգչախումբը՝ Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում: Նա նաև հավաքել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի մանկական կամերային երգչախումբ՝ նվիրված Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի ընդունման 20-ամյակին և Համահայկական սիմֆոնիկ նվագախումբը, որի նպատակն ամփոփված էր աշխարհասփյուռ հայության միավորման գաղափարում: Իսկ որպես կրթության և նորարարության ջատագով՝ նա ստեղծել է «ԴասԱ» նախագիծը՝ ավագ դպրոցում իրականացվող մի ծրագիր, որն աշակերտներին հնարավորություն է ընձեռում մոտիկից ծանոթանալու դասական երաժշտությանը:

Սերգեյ Սմբատյանի կարիերայի համար նշանակալից առաջխաղացում էին վերջին ժամանակների համերգաշրջանները, որոնց ընթացքում որպես հրավիրյալ դիրիժոր ելույթ է ունեցել Բեռլինի, Վարշավայի, Երուսաղեմի, Պրահայի ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբերի, Դրեզդենի ֆիլհարմոնիկ նվագախմբի Բեռլինի «Կոմիշե օպեր» և այլ երաժշտական կոլեկտիվների հետ: Մալթայի ֆիլհարմոնիկ նվագախմբի 2021-2022 համերգաշրջանի Եվրոպական տուրի շրջանակում Սերգեյ Սմբատյանը նվագախմբի հետ ծրագրում է հանդես գալ Բեռլինի ֆիլհարմոնիայի և Վիեննայի «Մուզիքֆեդայն» դահլիճներում, իսկ 2022-2023թթ. համերգաշրջանում կղեկավարի նվագախմբի ելույթները Միացյալ Թագավորությունում անցկացվելիք առաջին համերգային տուրի ընթացքում:



armsymphony.am